

ՔՆԴԴԻՄԱԽՈՍՈՒԹԻՒՆ,

## ՎԱՐԴԱՌ ԵՒ ՎԱՍԱԿ.

(«ԱՐԴՅՈՒՆ» 1880 Նոյեմբեր):

Պարտական.

Արկին ասում եմ, պատմութեան մի երեսն ևս կարդացել, Պարսկակը ոչ մի ժամանակ չէ օգնել Հայոց, այլ պարթեական տոհմն էր մեզ բարեկամ, սկսած մեծ Արշակից մինչ վերջին Արտաւան թաղաւորը. իսկ Ասսանեան Արտաշրից մինչ յազկերտ Ի. զուցէ և միշտ, մեր ազգի անհաշտ թշնամիէ եղել բայց Յոյները շատ և շատ անգամ օգնել են մեզ: Պատպահառ թաղաւորները պարտաւոր էին երախտագիտ լինել Յունաց, իբրև բարերարի, բայց ապերախտ գտնւեցան ու պատժեցան արդարապէս: Հայկազանց իշխանութեան ժամանակ միայն օգնել են մեզ Պարսից թաղաւորները և փոխադարձ ստացել են մեր կրկնակի օգնութիւնը: Աշապատմութեան անցեալը, իսկ ներկայն պարզ է ամեն Հայու աշաց առաջ: Ասացիք թէ, Յազկերտ տալիս է մեզ իշխանութիւն, ոչ Վառամն իրաւունք ուներ կամ կարօղ էր բառնալ մեր իշխանութիւնը և ոչ Յազկերտ կարօղ է տալ կրկն, միմիայն մեր անմիաբանութիւնը զրկեց մեզ իշխանութիւնից, և մեր միութիւնը միայն կարօղ է կրկն ձեռք բերել զայն, յիմար է այն ազգը, որ ինքն անմիաբան և անշարժ նստած ցանկանումէ այլոց օգնութեամբ իշխանութիւն և աղատութիւն ձեռք բերել. մեք այն ժամանակն յիմարացանք, որ չլսեցինք մեր բարերար Ասհակայ խրատուց, մեր հիւանդ ոչխարը փոխեցինք Պարսից առողջ զազանի հետ, մեր աղատութիւնը ծախեցինք կամաւ, մեր արթուն, անձնաղիր ու երախտաւոր հովելի գաւաղանը տւինք փառամոլ, տղէտ Վաղիշոյին և Իրքիշոյին, որոց ձեռօք մեր Ա. եկեղեցու մեջ տգէտ, մոլի և վատ Պետրոս ու Զանգակի պաշտօնեաներով լցրինք: Եյո ցաւալի և գառն Ճշմարտութեան մեք ականատես վկայ եմք, զոր մեր նախորդները զործեցին. մեք բոլորովին յիմար կլինիմք՝ եթէ հետեւիմք մեր նախնեաց ազգակործան խորհրդին և զործին: Տէր մարզպան, մեք տակաւին բոլորովին յաղթւած չեմք, կարօղ եմք կրկն անկախութիւն կամ ինքնավարութիւն ձեռք բերել, եթէ միաբանիմք, եթէ լսեմք մեր հովել Յովսէփ եպիսկոպոսին, դաշնակցեմք նաև մեր

կրօնակից Յունաց և Աղուանից հետ, կարօղ կլինիմք ոչ միայն պահպանել քրիստոնէութիւնը, ձեռք բերել մեր թագաւորութիւնը, այլ նաև բառնաւ Պարսկաստանից կռապաշտութեան խաւարը. բայց նախ քան այդ տունը պէտքէ մեր կրօնական և քաղաքական ոյժը միացնեմք, բառնաւ մեր մէջից կռապաշտական աղանդներն ու նախապաշտարմունքները, որ զեռ Հայաստանի մութ անկիւններում ծածկւած են: Յորդորեմք ուսումնական անձանց, յանձն առնուլ քարոզութեան պաշտօն, զնաւ քարոզել նորանց ուղիղ հաւատը և ազգային եկեղեցու ծոց մոցնել: Որովհետեւ մի ազգի անդամոց մէջ ծագած զանազան աղանդներն իրբեւ որոմն ապականում են մաքուր ցորեանը, թուլացնում են ազգային միութեան գաղափարն ու կապը. ազգի մէջ ծագած աղանդներն այն, փուշ են և խեղզում են ընտիր բոյսերը, եթէ չեմք կարօղ իրաց քաղել որոմն ու փուշը, զո՞նէ աշխատիմք արթուն պահապաններ զնել, որ թշնամին չհամարձակի շարունակ ցանել որոմն ու փուշ: Յազկերտ այսօր կրօնի պատրուակաւ է պատերազմում, վաղն անշուշտ լեզուի և դպրութեան, միւս օրն Հայրենեաց համար պիտի պատերազմի. յիշիր Շապուհի արածը՝ որ մեր Հայրենիքը յափշտակելու համար էր պատերազմում, բայց նախ և առաջ աշխատում էր ուրացող Մէհրուժանի ձեռօք հաւաքել, այրել զրեանը, մշտապէս տիրելու նպատակաւ: Ուրիմն մէք երբ այժմից չմիանամք, չլսեմք մեր կրօնապետին, փոխենք մեր կրօնն իշխանութիւն ձեռօք բերելու դիտմամբ, մեր մէջ կրօնական կուսակցութիւններ պիտի ծագին, ներքին պատերազմներ պիտի օգնեն արտաքին պատերազմին, ու սպառի մեր ոյժը, այն ժամանակ մէք մեր ձեռօք պիտի թաղեմք մեր ապագայ յոյսը, և ականատես պիտի լինիմք կործանման Հայ լեզուի, դպրութեան, ազգութեան և Հայրենեաց, բոյորովին ի մի ձուլւելով Պարսկաց հետ, և ո զիտէ, ժամանակի հոսանքն ինչ տեսակ կրօն մոցնէ նաև Պարսկաց մէջ և մէք նոցա հետ արդէն միացած, ազգովին նոյն կրօնին դիմեմք ապագային: Ուստի մեր ազգի շահը պահնջում է պաշտպանել մեր Կրօնն իրբեւ կապ միութեան ազգի:

### Վաստի.

Յունաց վերայ յոյս զնել կարելի չէ, նոքա խարող, նենդ և խարդախ են, նոքա ցանկանում են մեզ կրօնքով միացնել իւրեանց հետ և ի մի ձուլել իսկ Եղուանք մեզանից աւելի կարօտ են օգնութեան,

մեք մեր անզլուխ վարչութեամբ եթէ պատերազմելու յանդզնիք, Պարսից անթիւ զօրաց նախածաշիկ անզամ լինելու քիչ եմք, այն ժամանակ այդ քո օդային ամրոցներդ օղի մէջ պիտի ցնոյն, մի ուռուր մէջ Նայ անունը պիտի ջնջւի աշխարհի երեւեց, և այդ քո պաշտած ու պաշտպանել ուղած կրօնի պիտի կորցնե իւր դոյրութիւնը:

### Ա. Ա. Պ. Ա. Հ.

Եայց պէտքէ յուսալ աներկեայ, որ Նայոց միութիւնը հրաշք ներ կարէ զորձել, վասն զի ամեն անզամ որ յաղթւել եմք օտարներից, միմիայն մեր երկպառակութիւնը և ներքին պատերազմն է եղել սկզբնապատճառ, որոյ համար օտար աղջերն աշխատում են նախ մեր միութիւնը ցրւել, բաժանել ու տիրել: Ուր մէջ զբժրագլաբար ազգային միութեան ողին մեռած է, որովհետեւ Նայ ազգը զանազան ազգաց հատուածներից է բաղկացել. իւրաքանչեւր ցեղն իւր յատուկ բնաւորութիւնն ունի. միայն կրօնի մէջ կարելի է յուսալ միութիւն, որ ամենիս սեպհական է, աշխարհական փառաց համար զժուար են միանում Նայերը. թող ներւի ինձ ասել, որ մեք այնքան չեմք զարգացել, որ մեր հայրենի ժառանգութիւնը, կամ մեր քրտինքով ձեռք բերած կամ պարզե ստացած սեպհականութիւնը զոհեմք մի տոհմի կամ մի անձի համար, նորան տէր և իշխան կարգել ընդհանրութեան, թէե զարգացեալ ազգաց էլ զժուար է այս: Ես ամենայն յօժարութեամբ յանձն կառնէի իմ զնդիս հետ թափել մեր արեան վերջին կաթիլներն զքեղ թագաւոր պսակել Նայոց և պաշտպանել, եթէ մեր նախարարաց մէծ մասն ինձ հետ միաբանէր այդ մասին, և ներքին խռովութիւն և պատերազմ չծագեր մեր մէջ: Եայց երբ այժմ այս անկարելի է համարւում, թերեւս ապագայում շատ հեշտ լինի, երբ զու միաբանիս մեզ հետ, պաշտպանել կրօն, յաղթել Պարսից զոռոզութեան, այն ժամանակ տմբողջ ազգը կրհամաձայնի նախազահութեան փառքն ու պատիւը տոհմական ժառանգութեամբ տալ քեզ իրեւ վարձ և պարզե կրօն, ազգ, լիզու, զպրութիւն և հայրենիք ազատող բարերարի: Եաւ քաջ համոզւել եմ, որ Նայերը տակաւին այնչափ չեն զարգացել քաղաքակրթել և լուսաւորւել, որ կարենան հանրապետական կամ հասարակապետական կարգով կառա վարւել: Ուրեմն ապահով կառավարութիւն կրօնական կառավա-

ըութիւնն է, որ մեր կրօնականաց պէտքէ տալ, այն ևս ոչ առհմական ժամանդաւթեամբ, այլ ազգային ընտրութեամբ, լաւագունին տոլով, հնազանդելով նոցա, մինչ ժամանակն ու հանգամանքն որոշէ քաղաքական և կրօնական կառավարութեան պաշտօնները, դարձեալ երկուքն ևս միմեանց զուղընթաց և առընչակից դրութեան մեջ պահելով : Տեր մարզպան, ևս օդային ամրոցներ չեմ շինում, այլ փորձի և իրականութեան տէսակէտից եմ խօսում : Յաղիերտ քաջ զիտէ որ մեզ բաժանելով միայն կարող է յաղթել, զիտէ նաև որ բանութեամբ չի կարող մեզ կրօնափոխ անել ազգովնեն, ուսափ քաղաքազիատական խորամանկութեամբ, քեզ կամ ինձ կամ մի ուրիշի պիտի խօսաանայ տալ ։ այսոց թագաւորի թագն ու դաւագան, զուցէ և խօսաացել է մի քանիսին ևս, որպէս զի մեր մեջ կը կին ներքին շփոթութիւն և խռովութիւն յարուցանէ, մեր ոյժն սպառէ և յետոյ առանց դժւարութեան կարօղանայ տիրել և իւր նպատակին հասանիլ, կրօնիւ և ազգաւ միացնելով զմեզ իւր ազգի հետ : Ա ան զի այն իշխանն որ ազգի համահաճութեամբ չէ եղել իշխան, նա չէ կարող ապահով իշխանութիւն վարել և համակրութիւն զտնել ազգից, ուրեմն մեզ հարկաւոր չէ Յաղիերտի խօստացած կամ տուած իշխանութիւնը, նա այսօր քեզ մարզպան է կարգել, ինձ սպարապետ է զրել, վազն ինքնահաճութեամբ կամ մի ըմբոստ չարախօսի զրդմամբ կը զրկէ նոյն պաշտօնից և ուրիշի կը յանձնէ, ուրեմն մեք այն ժամանակ միայն ապահով կլինիմք և կարող կլինիմք պարձելու մեր իշխանութեան փառաց ու պատռոյ վերայ, երբ ազգ ինքն առանց մեր հետամտութեան առյ մեզ : Զայետքէ բնաւ յոյս զնել ոչ Յաղիերտի և ոչ մեր պաշտօնի վերայ, առ այժմ յօժարութեամբ կը ամամք նորա բոլոր ծանր հարկերը, միայն թէ նա մեր կը օնին ձեռնամուխ չլինի, մեր եկեղեցու զոնից ներս ոտ չկոխէ, ապա թէ ոչ մեք իհարկից ստիպեալ կը պարտաւորւթիւք ապստամբել նորանից, կամ Յունաց կողմն անցնել կամ ինքնուրոյն պատերազմել, պատւաւոր կերպով յաղթել կամ յաղթւել, ապազայ սերնդոց նզովից և արհամարհանաց չնեթարկել մեր միշտատալը, այս կերպով, այս նպատակաւ յաղթութիւնն ու պարտութիւնը մի և նոյն մրցանակը կը տայ մեզ, ներկայի և ապագայի ձեռօք, թող թէ երկնաւոր հանդիսադիրը կվարձատրէ մեզ անշուշտ, մեր նպատակի համեմատ,

## Վաստակեալ

Տակաւին մի և նոյն յամառութեան մէջ ես, չկարացի համոզել քեզ, որ ի գուը է ընզիմանալ Յաղկերտին, մեք կարօղ չեմք մի քանի հաղար խառնիճաղանձներով պարսից անթիւ բազմութեան զեմ զնել, ներկայ և ապագայ ազգերը մեզ յիմար և յանդուղն պիտի համարեն. հաղար անդամ կրկնեցի որ մեր անքաղաքաղեա հոգեորականաց լսելն այլընեաց և աղզի կորուստ կը պատճառէ. հաղար անդամ կրկնեցի որ Պարսիկը մեզ թշնամի չէ, մի թիզ հող չէ պահանջում մեզանից, գուցէ և կօգնէ մեզ, իսկ Յունաց ձեռքից հայաստանի Երեմուեան մասն էլ: Եշխառհի վերայ ամեն աղզ իւր կրօնը նախապատիւ է համարում, և միանդամայն ձշմարիտ և ուղղափառ, կարելի է որ բոլորն էլ ձշմարիտ լինին, կամ սուտ և սխալ. միթէ մեր բոլոր նախնիք զժոխք զնացին, մեր այժմեան կրօնը չունենալու պատճառաւ: Եմեն քան պէտք է խոնարհի ժամանակի պահանջին, զու պատճապէտ ես և զիտես հայոց անցեալլ: Հայկից մինչ Ենուշաւան աստուածապաշտ էին, անտի մինչ հայկազնց տերութեան վերջը և Երշակունեաց Երշամեան Երգար նմանօղ եղան օտար ազգաց, խոնարհեցան ժամանակի պահանջին, կռապաշտութեան զիմեցին ազգովին, Երգար միացն ընդունեց քրիստոնէական հաւատը, բորոտութիւնից բժշկւելու յուտով, որ առանց նորան էլ զուցէ կը բժշկւեր, նորանից յետոյ իւր յաջորդները կը կին կռապաշտութեան մէջ ընկան մինչ Տրդատ, որ համոզւելով կամ խարելով պարթե Վրիգորին, կամ թերես համաձայնելով ժամանակի պահանջին, հետեւեցաւ Յունաց մեծն Կոստանդիանոս կայսեր, թողուց կռապաշտութիւնը, իրեւ մի քաջ և անզութ յեղափոխապետ անխնայ կործանից հոյակապ կռապաշտուներն, որոնք զարդ էին հայաստանին իւրեանց Ճարտարարւեստ շքեղութեամբ. բոնի քրիստոնէութիւն ընդունել տուեց հայոց: Եւ եթէ լաւ ուշադրութեամբ քննենք, հայերը կռապաշտութեան կրօնիւ աւելի միաբան, աղզակը, հայրենատէր, առաքինի, քաջ և յաղթող էին, քան քրիստոնէական կրօնիւ, որ մարմնոյ զբկանաց և թշուառութեան ստածու է, թե նորանով մի բարի պիտի լինի հոգուն, այն էլ կասկածելի է, ու երեակուցական: Եյժմ ժամանակի պահանջն ու Յաղկերտ պահանջում են կրկին աղզովին կրօնափոխութիւն, պէտք է հապանպիլ, եթէ կամենում եմք աշխարհի երեսի վերայ իրեւ աղզ ապրել և տպագայ ունենալ, հայերը պէս չղբկւել ամենայն յաջո-

զութիւնից, և հայրենիքից, որք յախառութեամբ արհամարհեցին աշխարհի յաղթողաղ տիրողներին, Խարեբայ Մովսէնի զուշակութեանց վերայ գնելով իւրեանց յոյսը, ի վերջոյ տիրել աշխարհիւ ։ Արեւայ ազգն իւր կրօնիւ եթէ լաւ ապագայ ունենայ, Հայն ևս թող յուսայ ունենալ այս կրօնիւ, որ ատելի է թէ յաղթող Պարսից և թէ նոյն իսկ ակամայ պաշտօղներին։

### Վարդան.

Ըստ Խիստ և սխալ դատողութիւն ևս անում, թողումք Հոգ գեոր կետը, կրկին աղքային ահսակեաից զիահենք մեր կրօնին, մեք այժմ քաղաքական իշխանութեան աստիճանից վայր իջել եմք, մօտ եմք խորխորատի մեջ ընկնելու, սանդուխի ներքին աստիճանի վերայ կանգնած մի նեցուկ և յենարան ունիմք մեր ձեռք, նորանով կարելի է մի օր վեր բարձրանալու յոյս ունենալ, և այս նեցուկն ու յենարանը կրօնն է, եթէ թողումք զայն և օտարի կրօնն ընդունեմք, ինչպէս ասացի, լեզով և ազգութեամբ ևս կը ձուլենք նոցա հետ, ազգի ապագայ սերունդն իբրև խորթ որդի պիտի մտիկ տայ իւրեանց պատմական ծագման, կամ հայրենեաց վերայ. յայտնի օրինակներ մեր առաջ կան, դու վեր ի վերոյ ակնարկեցիր ։ Հայոց կրօնափախութեան ժամանակները միայն, պէտք է քննել և իմաստասիրել նախ թէ Հայ ազգն, ինչ ազգերից, ինչ տոհմերից է բաղկացել, եղել մի խմոր, և յետոյ կրօնը քննել։ Հայ ազգ միայն Հայկի սերունդը չէ, բազմաթիւ ազգերից հաւաքածոյ մի ձուլ ած է, Հայկի անունով Հայ կոչւեցան նախ իրան հնագանդող ազգերն իւր սերունդի հետ, յետոյ Նրծունիք, Գնունիք Քանանիդեանք, Քագրատունիք, Արշակունիք; Առաւելեանք, Վահանիդեցիք, Վահանիդեցիք, Վամիկոնիանքս և ուրիշ շատ ցեղեր, զանազան ազգաց հաւածներ, գաղթականներ, երբ միացան Հայ տարրի հետ, թէ կռապտշառութեան և թէ քրիստոնէական կրօնիւ, թողին իւրեանց բնիկ լեզուն, գպրութիւն, հայրենիք և ազգ, և այսօր միայն Հայ կրօնի և ազգի օգուան են խորհում, պատճառն Հայ կրօնիւ մի ձուլելն է, որք Հայ անունով մլրտւել են, Հայ լեզուն և գպրութիւնն ունին, Հայաստանում սեպհական հայրենիք, և բնաւ չեն յիշում իւրեանց պատմական անցեալը, իւրեանց ծագումը, բնիկ ազգն ու լեզուն կամ հայրենիքը, որովհետեւ Հայ տարրը զօրել էր և շատ, կռւլ տուեց և կորցրեց իւր մեջ, միացրեց իւր հետ ինչպէս ծովը ջրի

կաթիլները։ Քննիր տես, Արծունիք կամ Գնունիք որ Ասորիեն, այժմ ունին Ասորի լեզու կամ կրօն, սիրում են Ասորեստանի իրերեւ իւրեանց հայրենիք։ Բազրատունիք՝ որ Նըրէայ էին, այժմ ունին Մովսիսական կրօն, Արբայտական լեզու, սիրում են Աւետեաց երկիրն իրեւ իւրեանց հին հայրենիք, ցանկանում են վերտադառնալնորա ծոցը։ Խոյնպէս Քանանացի Քանանիգեանիք, Եղան Առաւելիզեանիք, Պուլլար Վանանդեցիք։ մեք Զինացի Մամիկոնեանիքս ունիմք մեր նախնական լեզուն ու կրօնը։ Եյսպէս նաև շատ ցեղեր կորած են զանազան ազգաց մլջ։ Ուր են հին ազգերը, Բարելացիք, Մակեղմացիք, Ազիմացիք, Հռովմացիք, Ակիւթացիք, Արբայեցիք քրիստոնեայք, և այն, կորան կամ մլացան այն ազգի հետ՝ որ ազգի կրօնն որ ընդունեցին։ Խթէ կամենում ես ակարացնել մի ազգ, նորա մլջ կրօնական բաժանումներ և ազանդներ ցանիր, բաւական է, ակարացաւ այն ազգը։ եթէ կամենում ես մի ազգ ջնջել աշխարհի երեսից, նոցա կրօնը միացուր մի հզօր տիրող ազգի կրօնի հետ, բաւական է, կորաւ այն ազգը։ եթէ կամենում ես բառնալ մի ազգի լեզուն, ջնջեր նոցա զպրութիւնը։ Խ՞նչ է զանազան ազգաց ստրոտիկելի ծախուց պատճառն, որ անում են, իւրեանց կրօնակիցներ որսալու զիամամբ։ յատուկ առաքեալներ ուղարկելով զանազան ազգաց և երկրի մլջ։ ուրիշ նպատակ չունին, այլ միայն իւրեանց ազգն ստւարացնելու նպատակ։ Խ՞նչի տիրող ազգն ստիպումէ հպատակաց իւր լեզուն խօսել, զարձեալ նոյն ի մի ձուլելու նպատակն է։ Որովհետեւ քնական է, կրօնափոխը սասաիկ ոխերիմ թշնամի է զանում իւր թողած կրօնին և նորա պաշտողներին, ցանկանում է իւր հետ միայնել ամբողջութիւնն, որ ինքն հատւածեալ չիրեի, որ իւրնոր ընդունած կրօնին հաւատարիմ երեի, նոր սիրած—յարած ազգից յարգութիւն զանէ։ Խթէ իւր թողած կրօնն ուղղափառ էր և նոր ընդունածն ես ուղղափառ է, նառ այնքան կրօնափոխ և կրօնուրաց է, որքան ազգափոխ է, և ազգուրաց, զորօրինակ, եթէ մեք Նայերս, զանամք Յունադաւան կամ Պատական, կրօնափոխ չեմք լինում, այլ ազգափոխ, թե և սկիզբը միայն կրօնափոխ եմք երեւմ, բայց մի քիչ ժամանակից յետոյ, Յոյն կամ Պատական անուն պիտի կրենք և ացլք ես նոյն անունով պիտի ճանաչեն զմեզ։ Խթէ թողած կրօնն անուզիլ էր և սուտ, նոր ընդունածն ուղիղ և ծշմարիտ է, կամ թողած կրօնն ուզիլ և ծշմարիտ էր, նոր ընդունածն անուզիլ և սուտ է, այս եր-

կու հանգամանքի մէջ կրօնափոխը թէ կրօնափոխ է և թէ ազգափոխ, այս տարբերութեամբ, որ առաջին անսակ կրօնափոխութիւնը, եթէ չունի մարմանոց օգուառ, գէթ հոգու օգուառն ունի, իսկ երկրորդ տեսակն, ուղղութիւնից զէպի անուղիղ զիմելն, բոլորովին յիմարութիւն է, կորուստ է հոգու և վնաս ազգի: Աւրիշ օրինակ ևս, երբ մի հարազատ որդի թողու, ուրանայ իւր առաքինի ծնօղը, սիրէ մի ուրիշ առաքինի անձն իրրե իւր ծնօղ, հայրանենգ է նա, բայց ոչ մոլի, եթէ հարազատ ծնօղն մոլի է, որդին թողու զայն և մի առաքինի անձն իւր ծնօղ ընդունի, թէպէտ գործն հայրամուռթիւն է, բայց առաքինութիւն է, իսկ եթէ թողու առաքինի ծնօղը, և զմոլին ընդունի իրրե ծնօղ, ապերախտութիւն է, մոլութիւն է և յիմարութիւն, ահա կրօնափոխութեան պատկերը: Վողրովին տարրեր և ուրիշ պատկեր ու երեսյթ է, երբ մի ազդի իշխանութիւն մի յանկարծակի յեղափոխութեամբ ազգովին զիմ, գէպի նոր մի կրօն, թողու հինը իւր լեզւից փալրութիւնից կամ ազգից ոչինչ չէ կորցնում, եթէ ունենայ նոր կրօնի հետ իւր ազգայն սովորութիւնը մի տարրեր ծէս և արարողութիւն կրօնի և լեզուն: ինչպէս Հոյերը երկու անդամ ազգովին կրօնափոխութեամբ չվնասեցին ազգի զոյութեանը, զառնարով Ասառածպաշտութիւնից զէպի կուապաշտութիւն և կրկնն կռապաշտութիւնից զէպի Վրիստոնեութիւն: Արց համար և Վրիստոնեութիւնն ունի զանազան ճիւղեր, ըստ թոյ ազգութեան, արբեր ծէս և արարողութիւն կրօնի ըստ ընաւորութեան ազգաց: Առաքեալներն ևս երբ փուեցան աշխարհ, քարոզեցին քրիստոնեական հաւատան, ազգաց սովորութեան համաձայն ծէսեր և աւանդութիւններ ստհմանեցին: Ոինչ Պետրոս ներում էր Հրէայ հաւատացեալների թլպատութեանը և մլրտում էր, բայց Թաղեսու և Վարդուղիմոս առաքեալները Հայաւանի մէջ բնաւթլպատութեան վերայ շխօսեցին: որովհետեւ Հայերը չունենալ թլպատութեան սովորութիւն, նոյնպէս և միւս առաքեալները հեթանոսաց մէջ: նոցա հետեւեցան և իւրեանց յաջորդներն, ինչ ազգի մէջ քարոզեցին զՎրիստոսու, նոյն ազգի սովորութեան հաւատայն ծէսեր և աւանդութիւններ կարգեցին, մինչև անդամ կռապաշտութեան այն սովորութիւններն, որ քրիստոնեական հաւատայ դէմ չին, անփոփոխ թողին: Եզրափոխութիւնը նոցա նպատակից շատ հետու էր, նոքա քարոզում էին «մի հօտ և մի հովիւ» բարոյական մաօք, այսինքն բոլոր մարդիկ իրեն մի հօտ հետեւիլ մի Հովիւ Յիսուսի:

Քայլց դարերից յետոյ, ազգասերներն սկսեցին քարողել բառի բան  
նշանակութեամբ «մի հօտ մի հովիւ» ազգութացութիւնն մի ազգ,  
մի հօտ, մի տէրութիւն, մի թագաւոր, մի օրէնք, մի ծէռ, մի արա-  
րողութիւն, երկնքում մի արեգակն, երկրում մի թագաւոր։ Եւ  
այս նպատակաւ ամեն հզօր ազգ ցանկացան և ցանկանում են սուա-  
բացնել իւրեանց ազգի թիւը կրօնի ստարւակաւ, ասրբեր կարծիք  
ունեցողներին զառն տանջանաց մասնելով, իսկ նկուն ազգերը  
պաշտպանեցին և պաշտպանում են իւրեանց ազգի ամրողջութիւ-  
նը կրօնափախութեան քարոզողներից, որոնք կրօնի պատրւակաւ  
մարդիկ են որսում կամ զօղանում, յափշտակում։ Օպեցան ազ-  
գոյին պատերազմներ կրօնի վարազուրի կամ վիմակի տակ։ Աւսաբ,  
ամեն դաշնակցութեան և հաշտագրութեան մջ զրին և պիտի  
զնին կրօնական ազատութիւնն իրրեւ առաջն պայման, որ սիրելի  
է յաղթօղին և յաղթեալին։ Վասն զի հզօր ու յաղթօղ ազգն  
այս կրօնական ազատութեան պայմանն ընդունումէ ոյն նողատա-  
կով, որ ազատութեամբ քարոզէ և որսայ տիսր ազգաց դեպի իւր  
կրօնն ու ազգութիւնը, իսկ տկար ազգն և ընդունում է կրօնական  
ազատութիւնն իրրեւ վահան, ոյնու պաշտպանել իւր ազգի ամ-  
բոզութիւնը և չժողուլ օտարին մնւա գործել իւր ազգի և եկե-  
ղեցու բնքնօրունութեան մէջ, բանի որսալ կամ յափշտակի իւր  
անդամները, խորթացնել իրանից և միայնել օտարի հետ։ Եյսպէս  
ահա այս կրօնական ազատութեան պայմանը միշտ կրկնել է և պի-  
տի կրկնել յաղթօղի և յաղթեալի բարեկամական դաշնազրի մջ,  
իւրաքանչիւր ազգն իւր օգուտը միայն խորհելով։ Աւրեմն մեք Նա-  
յերս էլ ստարտաւոր եմք առաջարկել այս պայմանն ամեն յաղթո-  
ղին, մարերելով մեր օգուտը, եմք ցանկանում եմք ազտղայ ու-  
նենալ, և շարունակել մեր ազգի զոյութիւնը, որքան ժամանակ  
արեգակն և լուսին շարունակեն իւրեանց շրջանները։ Ահաք է հե-  
տեւել Նրէից ազգին, որ իւրեանց ազգի զոյութիւնը պահպանել են  
մինչև ցայժմ միայն պինտ պահելով իւրեանց կրօնը, որոնք թէ և վա-  
զուց ընկած են քաղաքական իշխանութիւնից և ցրւած են աշխար-  
հի մջ, զրկւած հայրենիքից, ատելի եղած են քրիստոնէից, բայց  
իրրեւ ազգ պարտաւոր էին պահել իւրեանց կրօնն, իրրեւ կապ մրու-  
թեան տղզի, որոց թշւառութեան պատճառն ուրիշ բան չէ, այլ  
միայն իւրեանց ձշմարիս կրօնի գէմ մեղանչելը, և զանազան ազանց-  
ների բաժանուին է, չաելով Մովսիսին և մարզարէից, Ճանաչելով

իւրեանց Փրկիչ Յիսուսին, որ ոչ թէ կրօնափոխութիւն էր քարոզում, այլ մի և նոյն ծամարիտ կրօնն էր հաստատում, ստւերն իրականի փոխելով և աղանդիթը լուծելով։

(Կառավարութիւն-վ.)

Ա. Գնունի.

ՈՒՍՈՒՑՉԻ ԱՆՁ ԵՌԵԱՌՈՒԹԻՒՆԸ.

1) Ուսուցի անձնաւորութեան նշանակուրիւնը. — Ակատողուրիւն յարաբանիւր մի ուսուցի անձնաւական յատկուրեանց վրայ. — պահանջմունքներ, որոնց պար և քաշականացուցանիլ ուսուցիլը. 2) Այս պահանջմանց բաժանումը: 3) Պահանջմանին ուսուցից, որպէս մարդուց, որպէս անհատից, որ նույրած է իրան աշակերտների ուսուցման և կրուրեան, Ա) Յայտնի պարտաւորութիւն. Բ.) Բաւականին մակուսած թվու. Գ.) Համակրուրիւն դկափի մանկանց ուսուցման և կրուրեան գործը. Դ.) Ուր դկափի մանկունքը և համբերուրիւն. Ե.) Կամբի հաստատուրիւն և տնկունուրիւն. Զ.) Խնմակապուրիւն. Է.) Արքուրիւն. Ը.) Եղինակուրիւն դկափի իւր պարտականուրիւնը. Թ.) Սովորուրիւն ճշուրեան և սովորուրիւն անգործ ընթալու. Ժ.) Հմտուրիւն յարմարելու մանկանց նես. ԺԱ.) Հմտուրիւն հաստատելու պատշաճ յարմերուրիւններ իւր պաշօնակիցների, աշակերտաց ծնունդների և բարեկամների նես:

Ուսուցման ոգեսրութիւնը, ուսումնարանի կարգապահութիւնը և բարյական ազգեցութիւնը աշակերտաց վրայ՝ կախւած են, ինչպէս յայտնի է, ուսուցչի անձնաւորութիւնից: Ինչպէս Էլ որ չփայլի ուսումնարանը իւր արտաքին տեսքով, ինչպիսի հմտուր կանոններ և ծրագիրներ չունենայնա, այնու ամենայնիւնա չի համել իւր նպատակին, եթէ նորա ուսուցիչը թոյլ է և անարժան իւր վասեմ կոչեան: Ուսուցիչը ուսումնարանի հոգին է, նա է առաջի կենանք ուսումնարանին, առ էք նորան և ամենայն ինչ մեռածէ, Քայլ նայենք, թէ ինչպիսի պահանջմանց բաւականութիւն պիտի տ ոյ ուսուցչիչը որ կարողանայ արդարացնել իւր այդ նշանակութիւնը:

Անհետն կլինէր առաջարկել մի ընդհանուր օրինակ, որին ճշտապէս բաւականայնելը լինէր իւրաքանչիւր մի ուսուցչի պարտաւորութիւն: Եւրաքանչիւր մարդ այնքան անհատական առանձնութիւններ ունի իւր ներքին հոգեկան բնութեան մէջ, մինչև անդամ ընդհանուր մարդկային յատկութիւնները իւրեանց ոյժով այն աստիճան զանազան են առանձին անհատների մէջ որ անկարելի է գտնել գոնէ երկու մարդ որոնք հաւասարապէս ընդունակ լինէին բաւականութիւն տալ ոյս կամ այն պարտաւորութեան: Երկու իւրեանց կոչման միահամար արժանի ուսուցիչները իւրեանց հոգեկան բնութեամբ չեն կարօղ նմանիլ իւրաքանչիւր Այս պատճառաւ, խօսելով ուսուցչի անձնաւորութեան վերայ, կարելիէ ցոյց տալ միայն այն պահանջ-